«Նոր ժամանակի կրթություն»ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը «Գրականություն» առարկայի ուսուցման գործընթացում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հակոբյան Հայկանուշ

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԹԵՄԱ ՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը «Գրականություն» առարկայի ուսուցման գործընթացում

ՀԱՐՑ՝ Հնարավոր է արդյո՞ք զարգացնել սովորողների քննադատական մտածողության հմտությունները գրականության դասավանդման միջոցով

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն:Այսօր յուրաքանչյուր անհատից, ավելի քան երբևէ, պահանջվում է բարդ խնդիրներ լուծելու, հանգամանքները քննախույզ դիտարկելու, այլընտրանքային կարծիքները քննելու և լրջմիտ ու խելացի որոշումներ կայացնելու կարողունակություն: Սա արդեն իսկ քննադատական մտածողություն է: Ակնհայտ է նաև, որ քննադատաբար մտածելը հմտություն է, որ կարող է ձևավորվել և զարգանալ ուսումնական բարենպաստ միջավայրում: Ժամանակակից մարդուն նոր սոցիալ-տնտեսական միջավայրում իրեն հարմարավետ ու լավ զգալու համար անհրաժեշտ է, որ նա կարողանա արագ հարմարվել կյանքի փոփոխվող իրավիճակներին, ինքնուրույն ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ՝ դրանք կիրառի ծագող խնդիրների լուծման համար:

Քննադատական մտածողությունը կարևորագույն հմտություն է, որի հիմքերը պետք է դնի հանրակրթական դպրոցը: Հուզականությունը, ստեղծագործական երևակայությունը, արժեքային ներքին մղումները հանդիսանում են քննադատական մտածողության բաղադրիչ մասեր:

Ժամանակակից կրթական համակարգն ուղղված է ինտելեկտուալ զարգացած անհատի ձևավորմանը, որն օժտված է աշխարհի ամբողջական պատկերի ընկալմամբ, դրա երևույթների և գործընթացների միջև կապերը խորությամբ հասկանալու կարողությամբ: Միանգամայն ակնհայտ է, որ աշակերտը կգիտակցի գրականության կարևոր դերը մյուս բոլոր գիտությունների զարգացման, ինչպես նաև սոցիալականորեն նշանակալի հարցերի լուծման գործում: Գրականությունն օգնում է սովորողին ճիշտ կառուցել իր բանավոր և գրավոր խոսքը, մտքերը ձևակերպել հակիրճ և պարզ, հնարավորություն է տալիս առավել խորությամբ ուսումնասիրել և հասկանալ հետազոտվող երևույթները: Նման գործունեության մեջ ձևավորվում են մի շարք անհատական որակներ՝ ուշադրությունը կենտրոնացնելու կարողություն, սկսած գործն ավարտին հասցնելու համառություն, պնդումներում տրամաբանական հակասություններ հայտնաբերելու հակվածություն և այլն:

Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերաիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա միանգամայն սխալ մոտեցում է: Երեխաները ևս պատրաստակամորեն են

մասնակցում բարդ իրավիճակներում տարբեր մոտեցումներ պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:

Հետազոտության նպատակը.

Նպաստել երեխաների քննադատական մտածողության զարգացմանը նրանց տարիքային առանձնահատկությանը համապատասխան, ուրախ, հրապուրիչ դարձնել և հույզերով հագեցնել նրանց մանկությունը և պատանեկությունը: **Հետազոտության օբյեկտը՝** դպրոցական տարիքի երեխաներ

Հետազոտության առարկան ՝ պարզել քննադատական մտածողության համակարգի դերը ուսման արդյունավետության բարձրացման գործում

Հետազոտության գործիքը՝ մտագրոհի մեթոդ, որի իրականացման համար գործում են հետևյալ կանոնները.

-Մտքերի ազատ հոսք

-Գաղափարների խրախուսում

-Մասնակիցների հավասարություն

-Զուգորդումների (ասոցիացիաների) ազատություն

Մեթոդի առավելությունները՝ խթանում է ստեղծագործական մտածողությունը:

Որպես մեթոդ հեշտ է յուրացվում սովորողների կողմից: Միտքը միտք է ծնում: Խմբովի կազմվում են գաղափարներ: Պարզ մեթոդ է, հեշտ է հասկանալ , հեշտ է կիրառել և ազատ հաղորդակցվել:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Քննադատական մտածողությունը (անգլ.՝ critical thinking) ապացուցումների համակարգ է, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն: Քնննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները: Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է: Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի նախքան վերջնական եզրահանգումները: Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը: Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում, ինչպես նաև մեկնաբանվում է որպես «մտածողություն մտածողության մասին»: Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողությունը, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել: Առավել մանրամասն կարելի է սահմանել. դա կիրառելիության, համադրման և տեղեկույթի գնահատման ակտիվ և հմուտ վերլուծության գործընթաց է, հայեցակարգային ձևակերպում, որը ստացվում է ուսումնասիրություններով, փորձով, դատողություններով, հաղորդակցություններով:[1] Լրացուցիչ մեկնաբանություն տալու նպատակով Ռիչարդ

[1] Գ ու լ ամիր յ ան Ջ. Հ., Հայ ոց լ եզվի տպրական ու սու ցման մեթոդիկա, -Եր., Զանգակ-97, - 2006,- 328 էջ:
Գ ու լ ամիր յ ան Ջ. Հ., Խոսքի զարգացու մ, -Եր., Զանգակ-97, -2004, -288 էջ:
Թորոսյ ան Կ, Չիբու ի չ յ ան Կ, ԱԱԲՌԵԱԻ-2, Անմատ, 2010թ
Թորոսյ ան Կ, Չիբու ի չ յ ան Կ, ԱԱԲՌԵԱԻ-4, Անմատ,2008
Հայ ոց լ եզու և գրականու թ ու ն, Հանրակրթական դպրոցի առարկայական չ ափորոշիչ և ծրագիր: -Եր., Աստղիկ, -2006, -148 էջ:

Պոլը (1995) առաջարկեց քննադատական մտածողությունը բաժանել երկու տիպի՝ թույլ և ուժեղ: Թույլ իմաստով քննադատական մտածողությունը սահմանվում է որպես բարձր որակավորում ունեցող, բայց եսասիրությամբ մոտիվացված կեղծ-մտավորականի մտածողություն, ով զբաղված է իր բարեկեցության խնդիրներով և լրջորեն չի մտածում իր գործողությունների էթիկական հետևանքների մասին Նման մտածողության կրողը հաճախ ունի բարձր կրթություն, սակայն օգտագործում է իր գիտելիքները անարդար և եսասիրական նպատակներով: Քննադատական մտածողությունն ուժեղ իմաստով՝ առանց եսակենտրոն մոտիվացիաների և սոցիալական ուղղվածության շեղման, օբյեկտիվ ուսումնասիրության նպատակով արված դատողությունն է: Այս իմաստով քննադատական մտածողությունն անկեղծորեն միտված է ճշմարտությանը հասնելու ճանապարհին խոչընդոտները հաղթահարելուն: Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

• կանխորոշում են ուսումնառության նպատակները

•հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման

• նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը

• նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով

•ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը: Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել:

Գիտելիքի և մտածողության միջև եղած կապը փորձում է բացահայտել Դայանա Հալպերնը: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին

Թարգմանությունը՝ Արգարիտա Գյուլբեկի Հարությունյանի:
Այրոչյան Գ, Դասավանդման գործընթացի կառավարումն ու վերահսկողությունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Նոյյան տապան -Եր., - 2005, -190 էջ:
Իսկանդարյան Ա, Իսկանդարյան Ավ., 2010թ, էջ 104-113
Իսկանդարյան Ա, Իսկանդարյան Ավ., 2014թ, էջ 75-76

դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական, և՛ բացասական վերաբերմունք: ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը: Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Իսկ կան արդյոք ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել ՔՄ-ը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում: Դժվար է գտնել ՔՄ այնպիսի ոլորտ, որին հնարավոր չլինի տիրապետել: Ամերիկյան քոլեջների սովորողները վկայում են, որ իրենց քննադատական մտածողության հմտությունները զգալիորեն բարելավվել են մտածողության հմտություններ սովորեցնող դասընթացներից հետո:

Նրանք սկսել էին ավելի բարձր գնահատել իրենց մի շարք չափանիշներով, ինչպիսիք են՝ առանց ավելորդ շտապողականության դատողություններ անել, կարողանալ գնահատել հակադիր փաստարկները, բազմակողմանիորեն գնահատել, հաշվի առնել անորոշության գործոնը: Նրանք նշել են նաև, որ խնդիրներ լուծելիս կիրառում են տարբեր էվրիստիկ մոտեցումներ, ինչպիսիք են ավելորդ փաստերի բացառումը, ինֆորմացիայի աղբյուրի հուսալիության գնահատումը: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ գիտելիքները, որոնց ստացման ժամանակ տրվում են մտածողության ընդհանուր կանոններ, կարող են փոխադրվել նաև գործունեության այլ ոլորտներ: Մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ:

Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները:

Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամաբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման: Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ: Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում: Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի մշակած աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: [2]

Ինչպես նաև Սանդերսի հիշողություն-փոխակերպում-մեկնաբանում-կիրառություն-վերլուծություն-համադրում-գնահատում համակարգում այս հարցերը դիտվում են իբրև հարցադրումների ամենաբարձր մակարդակ: Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի

---

[2]Գ ու լ ամիրյ ան Ջ. Հ., Հայ ոց լ եզվի տպրանկան ու սու ցման մեթոդիկա -Եր., Ամնգակ-97, - 2006,- 328 էջ:
Հայ ոց լ եզու և գրականու թյ ուն, Հանրակրթական դպրոցի առպրկայ ական չ ափորոշիչ և ծրագիր: -Եր., Անտարես, -2006, -148 էջ:
Թարգմանու թյ ունը՝ ԱմրգարիտԳ ու լ բեկի Հարու թյ ուն ի ամի:
Ամրոչ յ ան Գ, Դասավանդման գործընթացի կառավարու մն ու վերահսկողու թյ ունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցու մները գործողու թյ ան մեջ, Նոյ յ ան տապան -Եր., - 2005, -190 էջ:
Իսկանդար յ ան Ա, Իսկանդար յ ան Ավ., 2010թ, էջ 104-113
Իսկանդար յ ան Ա, Իսկանդար յ ան Ավ., 2014թ, էջ 75-76

անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից:

Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում է այն, ինչ արդեն իսկ գիտենք, և ընկած է մեր գիտելիքի հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ մենք ուզում ենք իմանալ: Ճանաչողության գործընթացում կարևոր է ֆիքսել այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել, բայց պետք նաև ֆիքսել այն, ինչը մենք դեռևս չգիտենք և ենթակա է պարզվելու: Այդպիսիք են հենց հարցերը: Հարցի կառուցվածքը հասկանալու համար նախ պետք է առանձնացնել այն, ինչ մենք արդեն գիտենք: Մեր իմացածի հիման վրա էլ արդեն կարելի է ձևակերպել հարցը:

Հարցը՝ որպես ճանաչողության ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ- որ հայտնի փաստի վրա:

Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկությթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը: Պիտի ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, գտնել օրինաչափությունները, սահմանել երևույթների ու գործընթացների բնույթն ու նշանակությունը,պատրաստ է լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ:Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

Այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ

կարող են գործադրվել մեզանում: Նման նորարական մեթոդների և գործելակերպի մի համակարգ է քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով /ՔՄՁԿԳՄ/ ծրագիրը: Այս ծրագրի նպատակն է կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ, այսինքն՝ գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը: ՔՄՁԿԳՄ ծրագրի համակարգն իրենից ներկայացնում է ուսուցման գործընթացի երեք փուլերը՝ նյութը սովորելուց առաջ / ներածական /, նյութը սովորելու ընթացքում / հիմնական /, նյութը սովորելուց հետո / անդրադարձ/:

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել ենք, որ մեր փոքրահասակ սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են, ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին, հարգանքով լսեն բազմազան կարծիքներ, պատրաստ լինեն և ձևակերպել, և հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից: Այսինքն՝ յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը: Ասվածի ապացույցն է գրական ունկնդրման դասաժամերի կազմակերպումը: Գրական ունկնդրման դասաժամը կազմակերպելիս պետք է նկատառել սովորողների պատրաստվածության մակարդակը, ծնողների սոցիալական վիճակը, դասարանի և դպրոցի գրադարանի ֆոնդը, երեխաների հետաքրքրությունների շրջանակը, նպաստել նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Եթե աշակերտներին քննադատաբար մտածել սովորեցնելը խիստ էական է , ապա դա պետք է համակարգված ձևով ներմուծվի դասավանդման գործելակերպի համատեքստի մեջ: Չի կարելի ենթադրել, որ աշակերտներն արդյունավետ քննադատական մտածողության կհասնեն ինքնաբերաբար կամ, պարզապես, որովհետև այն հռչակվել է կարևոր մի բան: Բավական չէ նաև քննադատական մտածողությունը դարձնել ուսումնական ծրագրի մի մասը: Քննադատական մտածողությունը չի կարող ձևավորվել «քննադատական մտածողության յոթ քայլ»-ը սովորեցնելու կամ որևէ այլ դեղատոմսի միջոցով: Արդյունավետ և քննադատաբար մտածող դառնալու համար աշակերտները պետք է քննադատական մտածողության իրական փորձառություն ունենան:

Տարածված սխալներից է այն պատկերացումը, որ քննադատական մտածողությունն ուսուցանվող «առարկա» է, կամ հմտությունների մի խումբ է, որը պետք է պարզապես մտապահել: Քննադատական մտածողությունը արդյունք է: Դա մտածողության այն ձևն է , որի շնորհիվ մարդը, գաղափարների կամ ինֆորմացիայի հետ փոխգործունեության մեջ մտնելով, բնականորեն, ինքնին մտածում է քննադատաբար (քննելով և դատելով) : Սա ակտիվ գործընթաց է , որը դիտավորյալ խթանվում է կամ ինքնաբուխ ի հայտ է գալիս, և որը սովորողին ընձեռում է ինֆորմացիան տնօրինողի կայուն դեր, այսինքն՝ սովորողը կարողանում է ինֆորմացիան քննության ենթարկել, յուրացնել, ձևափոխել, հարմարեցնել կամ ժխտել: Այն երևան է գալիս, երբ սովորողը սկսում է այս կարգի հարցեր տալ՝ «Ի՞նչ է այս ինֆորմացիան նշանակում ինձ համար», «Ինչպե՞ս է այս գիտելիքը հարաբերակցվում իմ պատկերացումների հետ», «Արդյո՞ք այս ինֆորմացիան օգտակար է», «Ինչպե՞ս եմ ես վերաբերվում այս գաղափարներին» կամ «Այս գաղափարների համաձայն գործելու հետևանքն ինչպիսի՞ն կլինի ինձ և ուրիշների համար»: Քննադատական մտածողությունը լավ չի յուրացվում ուսումնական ծրագրի կամ առօրյա կյանքի համատեքստից դուրս: Դպրոցում քննադատաբար մտածելու լավագույն ձևը այդ մտածողությունը կիրառելն է որպես որևէ գաղափարի մոտենալու եղանակ, որպես ամենօրյա ուսումնական ծրագրի մաս և ակնկալվող արդյունք: Քննադատական մտածողությանը և սովորելու գործընթացին վերաբերող վերջին գիտական հետազոտությունները ցույց են տվել, որ հմտությունների տարանջատ ուսուցումը և փաստերի յուրացումը հիմնախնդիր համարող մոդելը նվազեցնում է աշակերտի քննադատական մտածողությունը: Բրաունը (1989) պնդում է, որ իրական կյանքի խնդիրներից և նպատակներից կտրված հմտություններ սովորելը կարող է աշակերտներին հնարավորություն տալ

հաջողության հասնել որևէ առարկայի քննության ժամանակ, սակայն նրանք ի զորու չեն լինի այդ հմտությունները կիրառել նոր ու անսպասելի իրավիճակներում:

Քննադատական մտածողությունը և իմացական աճը տեղի է ունենում, երբ ուսուցիչը հասկանում և գիահատում է մտքերի և փորձի բազմազանությունը: Քննադատական մտածողությունը դրսևորվում է, երբ բացակայում է «միակ ճիշտ պատասխան» մտածելակերպը: Երբ ուսումնասիրում ենք քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականության մեջ գոյություն ունեցող մոդելները, ակնհայտ է դառնում, որ բոլոր այդ մոդելները շատ կամ քիչ չափով հիմնվում են դեռևս 1956թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա: Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական կամ, այսպես կոչված, իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակներից՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ և գնահատում: Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ սովորողներին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակները:

Բլումի տասքոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, այսինքն՝ նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում: Քննադատաբար մտածել սովորեցնելը հեշտ գործ չէ: Դեպի քննադատական մտածողություն տանող քայլերի վստահելի ցուցակներ գոյություն չունեն: Սակայն որոշակի պայմանների և պատկերացումների առկայությունը կարող են նպաստել քննադատական մտածողության զարգացմանը:

Քննադատական մտածողությունը խթանելու համար ուսուցիչները պետք է.

- Ժամանակ ու հնարավորություն տան քննադատական մտածողության փորձառություն անցնելու համար
- Թույլ տան աշակերտներին խորհել
- Ընդունեն տարբեր գաղափարներ և կարծիքներ
- Նպաստեն աշակերտների ակտիվ ներգրավմանը ուսումնական գործընթացում
- Աշակերտների համար ապահով միջավայր ստեղծեն, որտեղ բացառվում է ծաղրը
- Հավատ արտահայտեն յուրաքանչյուր աշակերտի քննադատաբար մտածելու կարողության նկատմամբ

• Գնահատեն քննադատական մտածողությունը

Արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար աշակերտները պետք է.

• Զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են

• Ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին

• Հարգանքով լսեն բազմազան կարծիքները

• Պատրաստ լինեն ձևակերպել և կասեցնել սեփական դատողությունները:

Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ սովորողը ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր ընկերների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույպես պետք է պատճառաբանված լինի, քանզի լսարանն ընդհանրապես ճնշում է գործադրում անհիմն կարծիքների վրա:

«Քննադատական մտածողություն» ուսուցման տեխնոլոգիան ունի իրականացման բազմաթիվ մեթոդներ ու հնարներ, որոնցից մեկն էլ «Մտածող գլխարկներ» մեթոդն է: Վերջինիս հեղինակը հոգեբան, ստեղծագործ մտածելակերպի ոլորտում փորձագետ Էդուարդ դե Բոնոն է: Մեթոդը հանդիսանում է քննադատական մտածողության զարգացման տարրերից մեկը: Բոնոն առանձնացնում է մեթոդի մի քանի առավելություններ.

• Մեզ հնարավորություն է տրվում խաղալ ինչ-որ մեկի դերը

• Դրանց օգնությամբ մենք հնարավորություն ենք ստանում ղեկավարել մեր ուշադրությունը

• Մեզ հնարավորություն է տրվում պայմանավորվել, համաձայնության գալ զրուցակցի հետ

Հաջորդ առավելությունը հետևում է խաղի կանոնները որոշելու հնարավորությունից:

Մարդիկ շատ լավ հասկանում են, թե ինչ կանոններով է ընթանում այս կամ խաղը: Այդ կանոնների ուսումնասիրումը հանդիսանում է մանկական տարիքում գիտելիքների կուտակման ամենահեռանկարային ձևերից մեկը: Այս մեթոդի հիմքում ընկած է զուգահեռ մտածելու հայեցակարգը: Այս մեթոդի օգնությամբ տարբեր

մոտեցումներ ու գաղափարներ հանդես են գալիս միաժամանակ՝ առանց իրար հանդեպ ինչ-որ առավելությունների:

Ուսուցիչներս, տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին, կարող ենք օգնել աշակերտներին խորհել կարդացածի մասին: Դեռևս ամառային արձակուրդներին աշակերտներին առաջարկում ենք ընթերցել իրենց նախընտրած ստեղծագործությունները: Նախօրոք պայմանավորվում ենք ծնողների հետ, որ նրանք իրենց երեխաներին օգնեն ընտրել այնպիսի մանկական գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, խոր գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ կառաջացնեն: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ, նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականության զգացում ունենալ: Դա առաջին վճռորոշ այն քայլն է, որն ընթերցողին դարձնում է ներգրավված: Սեպտեմբերին՝ ինքնուրույն ընթերցանությանը հատկացված դասաժամին, յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույն ներկայացնել իր գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի իր նախընտրած գրքի վրա, և բոլորն ընթերցեն այն:

Ապա ուղղում ենք հարցեր.

Ինչու՞ ես ընտրել այդ գիրքը:

Ինչպե՞ս է այն կարդացվում:

Դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության:

Անծանոթ բառեր կայի՞ն: Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Այնուհետև քվեարկում ենք և ըստ քվեարկության արդյունքների ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը ու որոշում այն ընթերցել:

Միասին սահմանում ենք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է աշակերտներին՝ գիրքն ընթերցելու համար: Հաշվի է առնվում տվյալ գիրքն ընթերցած աշակերտի կարծիքը: Նրանք պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի կարողանան պլաններ կազմել:

Տրված ժամանակը լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը: Աշակերտները բաժանվում են 4-5 խմբերի: Նրանց ուղղվում են հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են: Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում: Ի՞նչը դուր չեկավ: Ինչպե՞ս էր գիրքն սկսվում: Ինչպե՞ս ավարտվեց:[3] Արդյո՞ք ընդունելի ավարտ էր: Ի՞նչն էր կարևոր: Գիրքն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել ձեր գլխում: Ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք: Ի՞նչ սովորեցիք հերոսներից: Ո՞ր կերպարն ամենաշատը ձեզ դուր եկավ: Ի՞նչ հասկացաք՝ կարդալով այս գիրքը: Կարո՞ղ եք այլ ավարտ հորինել:Ինչպիսի՞ն էր տրամադրությունը: Ի՞նչ կարևոր իրադրություն եք վերհիշել: Ո՞րն էր ձեր սիրելի հատվածը: Այս գիրքը ձեզ որևէ դեպք կամ որևէ բան հիշեցնու՞մ է: Ձեր կարծիքով ինչու՞ է հեղինակը գրել այս գիրքը: Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարում են աշխատանքի բաժանում՝

ընտրելով խորագրեր՝ «Պատմվածքի քարտեզը», «Հեղինակի մասին», «Պատմվածքի մանրակերտը», «Մեր տպավորությունը»,Գլխավոր հերոսի բնութագիրը», «Նամակ հերոսին», «Հերոսի կողմից նամակ», «Պատմվածքի տարբեր հատվածների նկարազարդումը»: Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները, դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկանան ընթերցել այն: Երբ նույն պատմվածքն ընթերցեն բոլորը և քննարկեն, ապա այդպիսի ընթերցանությունը կմիավորի երեխաներին, և նրանց մեջ կզարգանան համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Խթանել աշակերտների հետաքրքրությունը և ցանկությունը՝ նոր նյութը հետազոտելու ոլորտում, դրդում է աշխույժ հետաքրքրությամբ վերհիշել ուսուցանվող թեմայի շուրջ իրենց ունեցած ամբողջ տեղեկատվությունը: Սկսում են խորհել բուն թեմայի մասին, հարցեր տալիս դրա վերաբերյալ: Այսկերպ

---

[3] Գ ու լ ամիր յ ան Ջ. Հ., Հայ ոց լ եզվի տպրական ու սու ցման մեթոդիկա, -Եր., Զանգակ-97, - 2006,- 328 էջ:
Գ ու լ ամիր յ ան Ջ. Հ., Խոսքի զարգացու մ, -Եր., Զանգակ-97, -2004, -288 էջ:
Թորոս յ ան Կ, Չիբու ի չ յ ան Կ, ԱԼԲԵԼԻ-2, Անմար, 2010թ
Թորոս յ ան Կ, Չիբու ի չ յ ան Կ, ԱԼԲԵԼԻ-4, Անմար, 2008թ
Հայ ոց լ եզու և գրականու թյ ուն, Հանրակրթական դպրոցի առարկայական չ ափորոշիչ և ծրագիր: -Եր., Աստղիկ, -2006, -148 էջ:
Թարգմանու թյ ունը՝ Ամերիկյան Գ ու լ բեկի Հարու թյ ու նյ ան:
Ամրոյ ան Գ, Դասավանդման գործընթացի կառավարու մ ու վերահսկողու թյ ունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցու մները գործողու թյ ան մեջ, Նոյ յ ան տապան -Եր., - 2005, -190 էջ:
Իսկանդար յ ան Ա, Իսկանդար յ ան Ավ., 2010թ, էջ 104-113
Իսկանդար յ ան Ա, Իսկանդար յ ան Ավ., 2014թ, էջ 75-76

աշակերտները կարողանում են լայն ու կայուն հիմք պատրաստել՝ նոր տեղեկատվությունն ընդունելու և այն հիմնավորապես յուրացնելու համար: Ի տարբերություն ավանդականի՝ այստեղ ամենագործուն դերը աշակերտինն է , իսկ ուսուցիչն ուղղորդողի դերում է: Այս ընթացքում ի հայտ են գալիս նաև եղած անհամաձայնությունները: Երբեմն-երբեմն հարցեր են տալիս, թե՝ արդյո՞ք բոլորն են համաձայն առաջարկված մտքին, և եթե այո կամ ոչ՝ ինչու՞: Յուրաքանչյուր պատասխանից առաջ աշակերտին մտածելու ժամանակ է տրամադրվում, պատասխանելիս խրախուսվում է արտահայտված ինքնուրույն կարծիքները: Մտքերի տարափ մեթոդի նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը նոր նյութի նկատմամբ, վեր հանել թեմայի վերաբերյալ իրենց ունեցած տեղեկությունները: Արտահայտված տարբեր կարծիքներն ու գիտելիքները նպաստավոր պայմաններ են ստեղծում աշակերտների հետաքրքրասիրությունն ու ուշադրությունը կենտրոնացած պահելու համար: Կարող են առաջանալ նորանոր հարցեր, որոնք նույնպես կխթանեն աշակերտների հետաքրքրությունները նոր նյութի նկատմամբ: Այս փուլում էական գործոն է այն, որ ես հնարավորինս քիչ էի խոսում՝ ասպարեզը տրամադրելով աշակերտներին:

Երկրորդ փուլը հիմնական փուլն է: Այս փուլում սովորողները հաղորդակցվում էին նոր տեղեկատվության և նոր գաղափարների: Ամենակարևորն այստեղ ներածական փուլում ձեռք բերված աշակերտների ներգրավման աստիճանի և հետաքրքրության պահպանման կարողությունն էր: Բացի այդ՝ աշակերտները վերահսկում էին իրենց ընկալումը, փորձում նոր ստացված տեղեկատվությունը հարմարեցնել իրենց մտքում արդեն առկա իմացություններին: Տեքստը լուռ ընթերցելիս աշակերտները մատիտով նշումներ էին կատարում այն հատվածների կողքին, որոնց մասին գիտեին / + նշանով / և այն հատվածների կողքին, որոնց մասին չգիտեին / - նշանով /: Ավանդական ուսուցման ժամանակ այս փուլում նոր դասը միայն ընթերցվում էր կա՛մ ուսուցչի, կա՛մ աշակերտի կողմից՝ առանց տեքստի վրա որևէ աշխատանք կատարելու: Արդյունքում՝ աշակերտը քիչ բան էր հիշում կարդացածից:

Վերջին փուլը եզրահանգան փուլն է: Այս փուլի նպատակն է՝ աշակերտների միջև ծավալել քննարկում, որի ընթացքում միմյանց հետ հաղորդակցմամբ, նրանք ծանոթանում էին տարբեր գիտելիքների, պատկերացումների, մտածում դրանց շուրջ, հարցեր տալիս, մեկնաբանում, բանավիճում, հակադրվում: Արդյունքում՝ կառուցվում էր սեփական իմացական դաշտը: Այս փուլում աշակերտն իսկապես յուրացնում, սեփականացնում էր նոր գիտելիքը, ընկալածն արտահայտում էր

սեփական բառերով ու ձևակերպումներով: Ապա դրանց շուրջ քննարում կազմակերպեցին ՝ ուղղորդող հարցերի օգնությամբ: Անդրադառնալով ներածական փուլում մտքերի տարափի ժամանակգրատախտակի գրառումներին՝ ողջ դասարանով համեմատում և քննարկում էին այն կետերը, որոնցվերաբերյալ համաձայնություն կամ տարաձայնություններ էին ի հայտ եկել: Պարզաբանվում էր, թե տեքստը կարդալուց հետո փարատվեցի՞ն արդյոք նրանց կասկածները: Վերջում աշակերտներին հանձնարարվեց նկարել տեքստին վերաբերող որևէ կերպար կամ տեսարան և ցույց տալ միմյանց: Այս աշխատանքի նպատակն էր՝ օգնել աշակերտին ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իրունեցած պատկերացումները: Իմ մասնագիտական-մանկավարժական մակարդակն արդեն համարժեք արձագանք էր գտնում աշակերտների վերաբերմունքի մեջ, երբ սովորողներն իրենք արդեն ուսուցման ընթացքում դրսևորվում էին որպես հավասարազոր որոնողներ ու կշռադատողներ: Ուսուցման այս եղանակների ներդրումը նպատակ ուներ ապահովելու աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը, զարգացնելու նրանց տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, քննադատական մտածողությունը ճանաչողության ինտերակտիվ գործընթաց է: Դրա էությունն այն է, որ ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվում է սովորողի ուսումնական աշխատանք կազմակերպողի: Աշակերտը ինքնուրույն որոնողական աշխատանքի արդյունքում ինքն է ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքներ: Աշակերտների քննադատական մտածողության զարգացման համար գրականության դասընթացը մեծ հնարավորություններ է ընձեռում: Քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառումը օգնում է, որ սովորողը գիտակցի և օգտագործի առաջադրանքների առանձնահատկությունները, որոնք կօգնեն հասկանալ դրա իմաստը , վերահսկի իր ընկալման ընթացքը և հասկանա, թե ինչն է հասկանում, ինչը՝ ոչ, չհասկանալու դեպքում փորձի գործադրել սեփական մտավոր կարողությունները: Աշակերտները պետք է դառնան քննադատաբար մտածող և սովորող մարդիկ, սակայն դրան հասնելու համար աշակերտներին անհրաժեշտ է ուսուցչի օգնությունը: Զարգացնելով քննադատական մտածողությունը՝ նպաստում ենք սովորողների մոտ լեզվական գրագիտության, սովորել սովորելու, գիտատեխնիկական կարողունակությունների ձևավորմանը: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել ՔՄ հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց,փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, -Եր., Զանգակ-97, - 2006,- 328 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Խոսքի զարգացում, -Եր., Զանգակ-97, -2004, -288 էջ:
3. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., ՄԱՅՐԵՆԻ -2, Մանմար, 2010թ.
4. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., ՄԱՅՐԵՆԻ -4, Մանմար,
5. 2008թ.Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: -Եր., Անտարես, -2006, -148 էջ:
6. Թարգմանությունը՝ Մարգարիտ Գյուլբեկի Հարությունյանի:
7. Մկրտչյան Գ., Դասավանդման գործընթացի կառավարումն ու վերահսկողությունը: Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Նոյյան տապան -Եր., - 2005, -190 էջ:
8. Իսկանդարյան Ս., Իսկանդարյան Սվ., 2010թ., էջ 104-113
9. Իսկանդարյան Ս., Իսկանդարյան Սվ., 2014թ., էջ 75-76